Գևորգ Էմին

Լորկայի երազը

Մի երազ տեսա ահավո~ր ու մո՛ւթ,
Եվ ասում են, թե դա… իրական է.-
Մեկը մի ձեռքով կոկո~րդս էր սեղմում,
Մյուսով՝ փակած քիթ ու բերա՛նը.
Եվ երբ ես, մահվան վերջին օրհասում,
Խռխռում էի մի կերպ՝
Նա շուռ էր գալիս
Եվ քմծիծքդո՛վ բոլորին ասում.

-Դեռ պոետ է՛լ է-
ՄԻ սրա՛ն նայեք
Ու սրա ձայնի~ն-
Ներդաշնակության ո՛չ մի զգացում,
Մեղեդայնությո~ւն
Եվ կամ քնքշությո~ւն,-

Ի~նչ հանգստություն,,,

ԼՈՐԿԱՅԻ ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔԸ
ԴԱՀԻՃՆԵՐԻՆ

Հայրենիքը լոկ հողն ու ջուրը չէ,
Ոչ էլ, Իսպա՛նիա, քո ճա՛ռն ու հի՛մնը,

Հրաժարվո~ւմ եմ ես քեզ Մայր կոչել.
Թե դու բոնության հոմանուհի~ն ես…

Հրաժարվո~ւմ եմ Կայսրին մատուցել,
Ա՛յն, ինչ Երկքի՛նն ու Աստծունն է.-
Գերադասում եմ անդարձ մոռացվե՛լ,
Քան լինել հանճա՛ր, որ … ձեռնասո~ւն է…

Հրաժարվո~ւմ եմ նվե՛ր ընդունել,-
Ենգ Դանայացու նվերն ամո՛թ է.
Հրաժարվո~ւմ եմ ուժի դեմ լռե՛լ.-
Թե դուք՝ Ֆռա՛նկո,
Ես՝ Դոն Կիխո~տն եմ:

Հրաժարվո~ւմ եմ Ձեզ հետ լուրջ վիճե՛լ,
Թե Ձեր կովանքը քենն ու նախա;նձն է.
Հրաժարվո~ւմ եմ ոհմակով շրջե՛լ,-
Ես գայլ չե~մ ծնվել,
Մարդը՝ միշտ ա~նձ է:

Հրաժարվո~ւմ եմ գրե՛լ ու խոսել՝
Բառից քամե~լ են ճշմարտությունը.
Հրաժարվո~ւմ եմ Ձեր խոսքը լսել՝
Ձեզ լսե՛լն անգամ… մեղսակցությո~ւն է:

Հրաժարվո~ւմ եմ Ձեր դեմ մարտնչե՛լ,-
ՄԻ զե՛նք կա միայն՝
Այն էլ կեղտո~տ է.
Հրաժարվո~ւմ եմ մինչև իսկ.. շնչել՝
Թունավորվա~ծ է մեր շնչած օդը…

Հրաժարվո~ւմ եմ ա՛յն ժամանակից,

Որ թացը չորից անզո~ր է զատել,
Հրաժարվո~ւմ եմ իմ միա՛կ կյանքից,
ԹԵ… ապրելո~ւ են ինձ դատապարտել…

Օ~, բոնակալնե՛ր, ինչքա~ն եք սիրում
Դուք բաստեղծին, երբ նա… ածյո~ւն է…
Ես վերջակե՛տ եմ այս կյանքին դնում,
Որ չտեսնե~մ իմ փառքի… ածո՝ւրդը: